

# ՏԻԳՐԱՆՈՒՅԻ

պատմական դրամա հինգ արարածով

Լեհոն ՄԱՆՈՒԿԱՆՑԻ

(Շաբանակութիւն և զերջ 1)

## ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐԻԱԾ

### ԵՐԵՒՈՅԹ I

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ, ՄԱՐԴՊԵՏ

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ (մանելով)

ՈՂջնն, սիրելիս: Ուր է թագաւորը:

### ՄԱՐԴՊԵՏ

Բարե՛, յարգելի:

Դուք հիւմնդ էիք, չէիք երեսում:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Ո՞չ, հիւանդ չէի: Ուր է թագաւորը:

1) Տե՛ս «Մարգար» № 1, 2, 3.

## ՄԱՐԴՊԵՏ

Խընճոյքումն է նա:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Խընճոյքում է նա:

## ՄԱՐԴՊԵՏ

Խընճոյքում, այս:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

ԽՄ վերադարձը

Հաղորդիր նոցա:

## ՄԱՐԴՊԵՏ

Զոյք աչքիս վերայ: (Գնում է):

## ԵՐԵՒԱՌՅԹ Ա

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ (մանելով)

Երանի հիւանդ պառկած լինէի:

Ես այն չար ժամին, որ այնքան դըժւար

Ցանձնաբարութիւնն ինձ վերայ չընկնէր:

Խ՞նչ երեսով այժըմ նայեմ նոցա երեսին:

Մեր ծերերըն էլ ջահելացել են,

Էլ չեն համբերել, միամտաբար

Երանց տւել են խըրախճանների

Եւ հանդիսաւոր օրը դեռ չ'եկած:

Վազօրօք ահա

Կատարում են մեծ տօնախըմբութիւն.

Արդէն լիալոյս են նորա, շուտով

Նոցա առաջին խորհըրդակիցը,

Խնչպէս զօրապես մի քաջամարտիկ,

Կը վերադառնայ խընդադէմ, պայծառ,

Ցաղթութեան դըրօշն ծածանելով...

Ահա գալիս են...

Երանի այլպէս դուք հանդիպէիք  
Մեր յաղթանակին, բաց ոչ թէ անարդ  
Այս օրհասական մեր սև աղէտին...

(Մանում է Աժդահակը խորհրդակիցների հետ. թագաւորը մօտենում  
է 1-ին Խորհրդակցին, որ չէ համարձակում զլուխը բարձրացնել Աժդա-  
հակը երկար և լուս. նապում է նորա վերան և նորա պակառ. դէմքը  
հետզնատէ մռավ և լուրջ կերպարանք է ստանում. Բոլորն քեան նախա-  
զգում են աղջտը Երկիւղալից խորին լուսթին),

### ԵՐԵՒՈՅԹ III

ԱԺԴԱՀԱԿ, ԽՈՐՀՐԴԱԿԻՑՆԵՐ

ԱԺԴԱՀԱԿ

Դէ խօսիր տեսնեմ:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑԻՑ

Կարմղ թագաւոր...

ԱԺԴԱՀԱԿ

Աչքերիս նայիր: Խնչպէս տեսնում եմ,  
Դատարկ ու բոշ ես դու վերադարձել,  
Որ համարձակում էլ չես պարզ աչքով  
Երեսիս նայել:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑԻՑ

Կարմղ թագաւոր...

ԱԺԴԱՀԱԿ

Ըսպասիր մի քիչ: (Գահը բարձրանալով). Ամբողջ մարմինը  
Դու դող գըձեցիր, անխիղն ալեսոր.  
Իմ հոգու ուրախ արրամազրութիւնը  
Դու լեզի գարձրիր: Նախաըզգում եմ  
Ի՞նչ պիտի գումես: Որքմն անբախտ եմ,  
Որ քեզպէս անպէտք ծերունիներ են  
Մերձաւորները... Դէ կըսում, տեսնեմ:  
Խնչպէս ընդունեց քեզ այն ատելին:

## 1-ին ԽՈՐՀՈՒԱԿԻՑ

Կըծու քըրքիջով և դառն հեղնութեամբ  
Եկան իմ առաջ, կարող թագաւոր:

ԱԺԴԱՀԱԿԱ

Կարող թագաւորըն աչքըդ հանէ,  
Անիրաւ ծերուկ. զու այդ ինչ արիր:

## 1-ին ԽՈՐՀՈՒԱԿԻՑ

Իմ բարի արքայ, մազի շափ անգամ  
Էլ մեղապարտ չէ քո խոնարհ ծառան.  
Բոլորըն արդէն յայտնի էր նոցա...

ԱԺԴԱՀԱԿԱ

Անիծեալ լինիս: Ինքըդ ես անշուշտ  
Մատնել ինձ և քեզ և մեղ ամենիս,  
Երկչոտ նապաստակ: Գոնէ այդ այծի  
Երկայն մօրուքիցդ էլ ամաշէիր:  
Ամեն մի խօսքըն արտասանելիս՝  
Գուցէ հինգ անգամ կակազել ես դու  
Եւ դողլողացել, վախկնոտ ծերունի:  
Դու իմ հաւատը ոտնակոլս արիր,  
Ապերախտ, անբան: Իմ շընորհներն  
Գու գետին տւիր: Բոլորից աւել  
Քեզ էի սիրում, յարգում, մեծարում,  
Քեզ եղբօր նըման վայսիայում էի:  
Դու իմ առաջին բարձակիցըն էիր  
Խըրախնաններում... և անցեալ անզամ,  
Երբ յաջողութեամբ դու կատարեցիր  
Իմ պատւէրները, դու Շոռացել ես  
Ի՞նչ ինչ ընծաներ քեզ պարզեցի...  
Քեզ լիակատար իրաւունք տւի  
Նըստել ու պառկել իմ ներկայութեամբ,  
Թոյլատըրեցի ծերունուդ վերան.

Կըրել ըսպիտակ այդ ժապաւէնը,  
Թագաւորիդ հետ հաւասարապէս,  
Եւ առաջինը համբուրել իմ այս  
Հողաթափներըս... Եւ այս ամենը  
Քեզ հերիք չեղաւ, երախտամոռաց,  
Խելակորոյս մարդ... էլ այսուհետեւ  
Աչքիս չերեսս այդ ժապաւէնով:

## 1-ին ԽՈՐՀԻԴԱԿԻՑ

Սպանիր ինձ, տէր:  
Այդ ոտներիդ տակ ինձ մատաղ արա,  
Միայն լըսիր իմ ասելիքըս:  
Թող գետին մըտնեմ, մի հատիկ օրում  
Թող զըրկւեմ բոլոր իմ ծաղկահասակ  
Զաւակներիցը, եթէ մեղսակից  
Լինեմ այդ գործին: Ես մեղաւոր չեմ:  
Ո՛հ, ամենելին ես մեղաւոր չեմ:

## ԱԺԴԱՀԱԿ

Ապա այս բան էր, որ գըլլիս եկաւ...  
Հիմա ի՞նչ անեմ:

## 1-ին ԽՈՐՀԻԴԱԿԻՑ

Առաջին խօսքը,  
Որ ես լըսեցի նոցա բերանից,  
Այդ սովորական ողջոյնը՝ չէր. ոչ—  
Այլ քարե եկար անմիտ խըրտւիլակ, —  
Ահա թէ ի՞նչպէս ինձ ընդունեցին:  
Հէսց այդ բոպէից կասկածանք ընկաւ  
Իմ սըրտում, արքայ, ես բոլորովին  
Եըշմած մընացի: Այնքան երկիրմի,  
Խորհրդաւոր էր Տիգրանի ասած  
Ամեն մի խօսքը, որ եթէ մի ելք,  
Մի հընար լինէր, ես իսկոյն և եթ  
Ետ կը դառնացի՝ առանց յայտնելու

Մեր հըբաւէրը: Մեր տեսակցութեան  
 Ամրող միջոցին կասկածանքները  
 Կամ աճում էին ու գըլխիս զարկում:—  
 Ասես կատաղած ծովի ալիքներ  
 Լինէին նորա, —կամ էլի հանդարտ  
 Անդրբաղառում: Կարող թագաւոր,  
 Ով լինէր իմ տեղ, որ այդ ըստէին  
 Զը կորցընէր իրան, և կէս չըլինէր  
 Նորա խեղճ հոգին: Միայն ես էի,  
 Որ կարողացայ ձեւանալ անդէտ,  
 Առ ոչինչ դընել նոցա յանդուգըն  
 Վիրաւորանքը և մինչև վերջը  
 Անյողղողդ մընալ...

## ԱԺԻԱՀԱԿ

Այդ թնդ, այլ պատմի՛ր  
 Յետոյ ի՞նչ եղաւ: Անէծք հայուհուն...

## ՀԱՐՊԱԳ (առանձին)

Զարանընի սիրա, ի՞նչ ես թըրւչկոտում  
 Ուրախութիւնից. պարելու միջոց  
 Դու դեռ շատ ունիս:

## 1-ին ԽՈՐՀՈՒԱԿԻՑ

Հաղորդելիքս... պէտք է տեսնէիք  
 Թէ ինչեր արին: Անէծք, միշոցներ,  
 Նըզով, հայհոյանք գըլխիս թափմեցին...  
 Երդում եմ, արքայ,  
 Իմ թագաւորիս հըզօր անունով,  
 Մեր այն դարանի ելեւցները  
 Ամենաչընչին մանրամասնութեամբ  
 Վաղօրօք արդէն զիտէին նոքա:  
 Բայց ի՞նչ հրաշքով է այդ իմացւել  
 Դա խորհուրդը է, տէր, որի մասին

Ես առժամանակ զեռ չեմ յանդըգնիլ  
Բերանըս բանալ:

## ԱԺԴԱՀԱԿ

Այդ իմ բանըս է՝  
Մասնիչ թագուհուն հրապարակ հանել  
Եւ պատժել նորանու Դու շարունակի՞ր...  
Քոյր ու եղբայրը երկու խընձոր են  
Եւ երկուքըն էլ մի ծառից կըտրած,  
Միթէ չէ յախոնի: Խնձ համբերութիւն,  
Խնձ համբերութիւն... Առելի կընոջ  
Ես պիտի ձեւեմ... Դու շարունակի՞ր:

## 1-ին ԽՈՐՀԻՐԴԱԿԻՑ

Երբ ես իմացաց, որ աննըպաստ ծուռ  
Է հանգամանքը, խափն կամեցայ  
Ես վերադառնալ: Ցեսնում եմ յանկարծ  
Խնձ թոյլ չեն տալիս. «Քեզ հարկաւոր է  
Մի օր ըսպասել. յանձնարարական  
Պէտք է մի նամակ տանես արքայիդ»:  
Ես էլ Բ'նչ անեմ—հակաճառելըն  
Անհնարին էր: Եւ այսպէս ահա  
Ես ճարահատեալ՝ զըլուխս քաշ արած  
Հըպատակւեցի նոցա հըրամանին:  
Ես մտայ բանտը, ուր հրաւիրեցին  
Չեր ալեռին...

## ԱԺԴԱՀԱԿ

Գըլլսովիին կորչեն  
Հողի երեսից բոլոր հայերը...

## 1-ին ԽՈՐՀԻՐԴԱԿԻՑ

Հետևեալ օրը ինչ դըժւարութեամբ  
Ճանապարհ ընկանք: Բայց ամենեին  
Անպատմելի է Բնչեր կըրեցինք,

Մինչև դուրս գալիք անիրաւ տեղից:  
 Փողոցների մէջ, դրեթէ ամեն  
 Մեր քաղաքոխում, հանդիսպում էին  
 Լրկտի խմբակներ, ծաղրածու խուժան,  
 Լակոսներ անգամ—մի խօսքով,  
 Բոլոր սըրիկաները և շան զարմերը,  
 Որոնցով լեցուն է Արմաւիրը,  
 Նոքա, ընկնելով մեր ետևիցը,  
 Ճիշտ կապիկացին խեղկատակութեամբ  
 Սուր սուլումնենով, շարածիծաղ, պիղծ  
 Գոռում-գոչումով մեզ քըշում էին  
 Մինչև ոստանի արւարձանները:  
 Ամբողջ քաղաքը թընդում էր ուրախ  
 Նւազածութեամբ և գուսանների  
 Բամբըռան ձայնով, և լրաւում էին  
 Բարձըր էկեցցէ-ներ—ողջ Արմաւիրը  
 Կարծես տօնում էր ինչ և փառաւոր  
 Տօնախըմբութիւն: Բոլորի բերանին  
 Պըտըտում էին էկեցցէ մեր Տիգրան,  
 Կեցցէ անձնազո՞ն մեր Տիգրանուհին:

## ԱԺԴԱՀԱԿ

Տիգրանուհուն շուտ այստեղ կոչեցէք:  
 Քո պատմութիւնը ահա պընդում է  
 Իմ կասկածանքը: Դու շարունակի՞ր:

1-ին ԽՈՐՀԻԴԱԿԻՑ

Այս կերպ հազիւ հազ մենք ազատեցինք  
 Այն աղմըկալից մայրաքաղաքից:  
 Բայց հազիւ թէ մենք շըրջապարիսալը  
 Մեր ետև թողինք,—մեր առջեւ դարձեալ  
 Բացւում է ահա մի նոր արհաւիրք.  
 Արաքսի բոլոր շամբուտ ափերը,  
 Մասիսի արձակ և լայնածաւալ

Բողոք զաշտերը սևացած էին  
 Նորաժողով, թարմ զօրագլնդերով  
 Խըրիստ համերգի ներդաշնակութեամբ՝  
 Նոքա թըմբուկներըն էին զափում  
 Եւ ածում փողերը... Կարճ թագաւոր,  
 Անխուսափելի է պատերազմը...  
 Երբ արագ արագ՝ մըրրկի նըման  
 Սըլանում էինք մենք նոցա մօտով,  
 Ցըրտագին սառսուռ էր անցնում բոլոր  
 Եմ ոսկորներիս միջով —

## ԱԺԴԱՀԱԿԱԿ

Ղազասիր:

Ի՞նչ եղաւ կինը: Կոչեցէք շուտով:

1-ին ԽՈՐՃՐԴԱԿԱԿԻՑ

Կարճ թագաւոր, այժմ ընդունիր  
 Այս գըրութիւնը: Սա կը վըկայէ  
 Եմ հաղորդածըս:

## ԱԺԴԱՀԱԿԱԿ

Կարդացէք, տեսնեմ:

1-ին ԽՈՐՃՐԴԱԿԱԿԻՑ (Կարդում է)

«Անարժան փեսայիս, անարդ բարեկամիս և ուխտադրուժ  
 դաշդակցիս...»:

## ԱԺԴԱՀԱԿԱԿ

Երկինք ու զետինը վըկայ — այսոեղ  
 Արիւնհեղութիւն ես պիտի անեմ  
 Խըլացիլ էք դուք: Ի՞նչ անդունդ մըսաւ  
 Այն անըզգամը: Կոչեցէք նորանն  
 Այժմ եմ միայն ես գըլու իս զալիս՝  
 Ի՞նչ խորհուրդ ունէր այն հորիզոնը,  
 Ուր բեեռում էր նա իւր աչքերը

Արևածագից մինչև երեկոյ:

Այժմ հասկացայ, թէ ինչու էր նա  
Տատանւում այնքան պարզորոշ ասել  
թէ մեզնից ում է առաւել սիրում—  
իւր եղբօր թէ ինձ: Մենք ամենեքեան  
կուրացած էինք մինչև այս ըստէն,  
Որ չը մերկացըրինք նորա կեղծիքը.  
Ո՞վ կը յանդըգնէր այս բանըն անել  
Բացի այն գուող օտարուհուցը,  
Որ դեի ազգից և կախարդներից  
է ծընունդ առած...

(Մտնում է Տիգրանուհին).

## ԵՐԵՒՈՅԹ. IV

ԱԺԴԱՀԱԿ, ՏԻԳՐԱՆՈՒՀԻ, ԽՈՐՀՐԴԱԿԻՑՆԵՐ

### ԱԺԴԱՀԱԿ

Համեցիր այստեղ:  
Մի աչքիս նայիր: Դէ հիմա լրսիր.  
Աս պիտի կարդայ սիրելի եղբօրդ  
Սիրելի նամակն: Ուշադլրութիւն:  
Դու շարունակիր քո ընթերցումը:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ (կարդում է)

«Ոչինչ խորամանկութեան և խարդախութեան չը դիմես այլ  
ևս, Աժդահակ, վերադ անմեղութեան լոյս ձգելու համար. մեր  
նախկին կապերն այժմ՝ կտրւած են, մեր բարեկամութեան հուրն  
հանգած մոխիր է դառած...»:

### ԱԺԴԱՀԱԿ

Լըսմամ ես:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Այս:

## ԱԺԴԱՀԱԿԱԿ

Լաւ լրսեիր ուրեմն:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ (կարդուա է)

«Աժդահակ, ոչինչ այլ ևս քեզ մնում չէ անելու, բացի մի բանից. ժողովիր զօրքեր և շտապինը ինձ հանդիպելու, եթէ չես ուզում, որ քո պալատի մէջ յանկարծուստ դվիսիդ կանգնեմ; Մնաս բարով, մինչև մեր օրհասական ճակատամարտի օրը: Տիղան, թագաւոր Հայոցն:

## ԱԺԴԱՀԱԿԱԿ

Լրսեցիր դու, կի՞ն:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Լրսեցի, այս:

## ԱԺԴԱՀԱԿԱԿ

Եւ լաւ լրսեցիր:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Շատ լաւ լրսեցի:

## ԱԺԴԱՀԱԿԱԿ

Անառակ դու կին, այս քո՞ բանը չէ:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Անառակ... Արքայ, արդեօք ինչ զործով  
Այդ զըծուծ կոչման ես արժանացայ:  
Ինձ կըշտամբելուց առաջ, թագաւոր,  
Զեր բարկութիւնը պիտի զըսպէիք:  
Այժըմ ես մի խօսք անգամ չեմ ասիլ  
Այդ բանի մասին:

## ԱԺԴԱՀԱԿԱԿ

Տեսնում էք սորան,

Այս երկայնահեր փուծ անզգամին...

Այս գալիսոնով, արեւս վըկաց,  
Ես կը ջախջախեմ սորա գլուխիս:  
Արին է կաթում իմ սըրտից, ով կին,  
Սարսիր ինձանից և որոշակի  
Ինձ պատասխանիր: (Լոռութիւն)

ՀԱՐՊԱԴ (առանձին)

Ըզդոց եղիք, կին,  
Մաղից է կախւած քո գոյութիւնը:

ԱԺԴԻԱՀԱՆԻ

Ի՞նձ համբերութիւն, ինձ համբերութիւն...  
Խոստովանւիր, կին, եթէ քո կեանկըը  
Թանկ է քեզ համար: Մենք բոլորեքեան  
Կասկածում ենք քեզ, քեզ ամբաստանում:  
Դու ես քո եղբօր մեր գաղանին յայտնել:  
Շերունիներըս ամենեքեան էլ  
Առելով ատում են անիրաւին.  
Սոքա չեն անիլ, չեն համարձակւիլ:  
Միմիան դու ես, որ նորան այնքան  
Երկըրպագում ես, կարծես երկնային  
Աստւածը լինէր: Խոստովանւիր, կին,  
Հրամայում եմ քեզ թագաւորական  
Իմ կարող խօսքով:

ՏԻԿՐԱՆՈՒՀԻ

ՆՐԻՔ Թագաւոր:

Մինչդեռ քեզ համար պիտանի էի,  
Վերին եթերում էիք տեղ տալիս  
Եւ ինձ ովսաննա էիք դուք անում,  
Դեռ մի ժամ առաջ իմ ոտի տակն էր  
Ամբողջ Մարաստան. իսկ այժըմ... այժըմ,  
Մոռացման տալով և իմ ծագումը  
Եւ իմ պատիւը վիրաւորելով,  
Իմ բարձրութիւնից գահավիժեցիք

Դուք ինձ ճահճակին դարշելի տիղմը:  
Խսձանից երբէք ոչինչ չէք լրսիլ  
Այդ բանի մասին: Այդ բանի համար  
Համբ է լեզուս: Ոչինչ չը գիտեմ:

## ԱԺԴԱՀԱԿԱԿ

Այս կամակորին  
Զեելը քեզ է, երկինքը վրկաց:

1-ին ԽՈՐՀՅՈՒԱԿԻՑ

Խօսիր, թագուհի...

## ԱԺԴԱՀԱԿԱԿ

Լըռիր, ալեհը,  
Այտուհետեւ դա ձեր թագուհին չէ:  
Այդ արտախոյըըդ զըլիցցդ հանիր,  
Դու պիղծ արարած:

ՏԻԳՐԱՆՈՒԶԻ (հանելով դնում է գահի պատւանդանի վերա)

Համեցէք, արքայ:

## ԱԺԴԱՀԱԿԱԿ

Դու, դժւ կըրկնել տաս իւր հրամանը:—  
Վերցըրէք սորան: Դուք կը բանտարկէք  
Սորան գետնափոր մեր խաւար բանտում:

ՏԻԳՐԱՆՈՒԶԻ

Օ՛հ, մայր—Անահիտ:

## ԱԺԴԱՀԱԿԱԿ

Եւ շըդթայակապ  
Կը ձըգէք այնտեղ այս անիծեալին:  
Թառամի՛ր այնտեղ, տուալամի՛ր այնտեղ,  
Գոռոմզ արարած: Յամառութեամբըդ  
Ահա ինչ վիճակ դու վաստակեցիր.  
Դու պիտի նեխւես, պիտի քայքայւես

Բորբոսնած հեղձիկ մըթնողորդի մէջ:  
 Յաւիտեան կարօտ դու պիտի մընաս  
 Մի լոյս — արևի, մի հանգիստ ժամի:  
 Ընկերակիցները կը լինեն միայն  
 Զըզւելի որդներ՝ նազուք մարմնիդ մէջ  
 Բազմութեամբ սերւած... Մի տեսնեմ բնչպէս  
 Ես անգիտանում իշխանութիւնը  
 Աներկիւզ, հըպարտ կամակորութեամբ:  
 Վերցըրէք սորանն

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Կարող թագաւոր...

## ԱԺԴԱՀԱԿ

Խոսանվանւիր, կի՞ն, այլապէս փըրկանք  
 Էլ չի՞ք քեզ համար, Անողոքելի  
 Է Աժդահակը,

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Աւելի յամառ  
 Է Տիգրանուհին: Տարէք ուր կ'ուզէք:

## ԱԺԴԱՀԱԿ

Տարէք ուր հարկն է (Տիգրանուհում տանում են):

## ԵՐԵՒՈՑԹ. Դ

ԱԺԴԱՀԱԿ, ԽՈՐՀՐԴԱԿԻՑՆԵՐ

## ԱԺԴԱՀԱԿ

Անիծւնս դու, կի՞ն.

Խնձ բոլորովին ուժասպառ արիր:  
 Բայց անըզգամը ինչ թալիս հանով  
 Է իմաց արել, որ չե՞նք իմացել —  
 Ահա հանելուկը, ահա զարմանքը:

2-րդ ԽՈՐՀԻՐԴԱԿԻՑ

Նա հաւատարիմ մարդիկ կունենար  
Մառաների մէջ, մեծափառ արքան.  
Եւ կարծում եմ ես, որ հարկաւոր է  
Հարց ու փորձ անել:

ԱԺԴԱՀԱԿ

Միթք մի այլ անձ  
Կարող էր գլուխել իմ ապարանքում,  
Որ այդ յանդբանէր... (Երեսում է 6-րդ Խորհրդակիցը).  
Այս մվ է. ահա –սա էլ մոլորւած  
Քայլով է զայխս: Իմ մեծ աստւածներ,  
Այս Բնէ կըրակ էք իմ գլուխին թափում:

ԵՐԵՒՈՅԹ VI

ՆՈՐԱ և 6-րդ ԽՈՐՀԻՐԴԱԿԻՑ

ԱԺԴԱՀԱԿ

Ո՞ւր է մեր լակոտը:

1-ին ԽՈՐՀԻՐԴԱԿԻՑ

Զեր այն լակոտի  
Առաջնորդութեամբ, կարող թագաւոր,  
Ամբողջ Պարսկաստան ոտի է կանգնել:

ԱԺԴԱՀԱԿ

Ոոլի է կանգնել... Ամբողջ Պարսկաստան:  
Ախ, Հարավադ, Հարսպագ: Անիծեալ լինիք,  
Երազարաններ...

6-րդ ԽՈՐՀԻՐԴԱԿԻՑ

Երբ հաղորդեցի  
Զեր ցանկութիւնը, թէ կամենում էք  
Տեսնել ձեր թոռան, որին իբրը շատ  
Կարօտել էք դուք, նա պատասխանեց՝

ԺԵՍ ԷԼ ԵՄ Նոյնպէս սաստիկ կարօռել  
Սիրելի պապիս և յուսով եմ ես,  
ՈՐ Կ'արժանանամ շուտով ցանկալի  
Նորա տեսութեան. և ահա ինչու  
Ըշտապում եմ ես դէսի Եկրատան....»

## ԱԺԴԱՀԱԿ

Խօլամիտ, տըխհար երազաբաններ. . .  
ԻՄ տէրութիւնը քար ու քանդ արին  
Խրանց անիմաստ մեկնութիւններով:  
Յիմար լինիմ ես թէ այսուհետեւ  
Հաւատ ընծայեմ նոցա խօսքերին.  
Մեր աղէտալի այս պատահարին  
Բընիկ պատճառը միայն նոքա են,  
Միմիայն նոքա և ուրիշ ոչ ոք:  
ԻՄ սարսափելի այն տեսիլները  
Խրագործւում են ահա ճշշտօրէն,  
Ամենաշընչին մանրամասնութեամբ:  
Այսուհետեւ այլ ես թող չը շըռայլին  
Խրանց կեղծ, շինծու իմաստութիւնը  
Խորհրդաւոր, պերճ աչքակապութեամբ.  
ԻՄ աչքից ընկան. նոքա իմ աչքում  
Խարեբաններ են և ուրիշ ոչինչ:  
Եթէ չը տանեմ ես մեր վերջնական  
Ճակատամարտը, երդում եմ, բոլոր  
Խմաստակները անյապաղ, առանց  
Այլեալլութեան ցըցերի վերայ  
Պիտի սեպանան: Փուչ անիրաւններ,  
Եթէ յարդալից ձեր դըլուինները  
Բան չեն ըմբռնում, ապա ինչու էք  
Մեկնում առարկած իմ երազները...  
Սակայն ինչ անեմ, ճակատիս գուցէ  
Այսպէս էր գըրած:

## 1-ին ԽՈՐՀԲԴԱԿԻՑ

Սաղ կենաց արքասու Միք յուսահատէիլ.  
Մեղ նըման կըտրիճ զինւորներ ունիք,  
Ուրեմն ինչն պիտի վըհատէք:

## ԱԺԴԻԱՀԱԿ

Էլ միք դանդաղիլ, սիրելիներըս,  
Գընացէք շուտով և ժողովեցէք  
Բազմաթիւ զօրքեր, արքացի անւամբ  
Քաջալերեցէք զինւորներին:  
Էզուց առաւօտ կամ երեկոյեան  
Պատրաստի արէք մի քանի գընդեր,  
Որ կարողանանք մեզանից առաջ  
Սահմանների մօտ նոցա ուզարկել.  
Եւ ձեր բոլորի հըրամանատարը  
Ես նըշանակում եմ այս իմ սիրելի,  
Իմ քաջ Հարպագին: Դուք ամենեքեան  
Հըլու հընազանդ կը լինէք սորան:  
Այժմ գընացէք. Հարպագը մընայ:

## 1-ին ԽՈՐՀԲԴԱԿԻՑ

Կարճ թագաւոր, կարծեմ աւելորդ  
Զէր լինիլ բընաւ աստւածներին էլ  
Այսպիսի դէպքում օգնութեան կոչել:

## ԱԺԴԻԱՀԱԿ

Այդ լաւ ասացիր: Այօր չեմ կարող —  
Խնձ վատ եմ ըզգում: Էզուց անսլատմառ  
Ես իմ ոլալատի տանիքի վերայ  
Զոհ պիտի բերեմ մեր աստւածներին.  
Քո քըրմերի հետ ներկայ կը լինեմ  
Արարողութեան: Հիմա ազատ էք:

(Թագաւորի ծիրանին համբուկելով բոլորեքեան հեռա-  
նում են բացի Հարպագից):

## ԵՐԵՒՈՅԹ 72

ԱԺԴԱՀԱԿ, ՀԱՐՊԱԳ

ԱԺԴԱՀԱԿ

Նըստիր, սիրելիսաւ

ՀԱՐՊԱԳ

Շընորհակալ եմ.

Այսպէս առաւել ես պարզ կը լրսեմ՝

Ինչ որ իմ տէրըն ինձ հըրամացէ,

ԱԺԴԱՀԱԿ /

Սիրելի Հարպակ, պարտական մընաս

Թէ թագաւորիդ քինապահ կարծես.

Ինչոր անախորժ եղած է մեր մէջ,

Բոլորըն այսօր մեծահոգութեամբ

Մուացման արւի: Սիրելի Հարպակ,

Քեզ համար էլ լսւ ակնյայտնի է:

Ի՞նչ օրհասական վիճակի մէջ է

Քո թագաւորը և հալրենիքը:

Այժմ իմ յոյսը միմիայն դու ես:

Թէպէս ինձ նըմանն դու էլ վրշտահար

Եւ ծերացած ես, և վեհ ճակատիդ

Մալել են հաստ-հաստ խոշոր կընծիռներ,

Սակայն ոչ տարիք, թէ ցաւ, թէ հոգսեր

Անզօր են եղել երկաթէ կուրծքըդ

Յաղթահարելու և քո յաղթանդամ

Թիկնաւէս մէջքը կըուացընելու:

Ես հաւաստի եմ—

Մինչև այժմ էլ քո մէջ կենում է

Առիւծային նոյն անվեհեր սիրաը,

Ինչպէս և առաջ, քո երիտասարդ

Բուռըն հասակում, և այդ խոր ընկած

Կրակու աչքերից առաջւայ նըման

Կայծեր են ցայտում, ասես խաւարում  
Քարայրի միջից վագրի լոյս-աչքեր  
Են փայլատակում, Թըշնամու ոյժը  
Դու պիտի փըշըես, սիրելի Հարպագ:  
Այսպէս չէ, ասա... Մօրուքըդ յետոյ  
Կ'ողբես, Հարպագ, այժմը ինձ լլամբր:

ՀԱՐՊԱԳ (սթափելով)

Ներիբ ինձ, արքայ, ամենախոնարհ  
Ներողութիւն է Ձեր ծառան խընդրում  
Արեգակնակայլ Ձեր Մեծութիւնից.  
Մինչև այժմ էլ շւարած եմ ես  
Ծանըր, տըխրալի տըպաւորութեան տակ  
Մոլորւած միտքըս մի բանի վերայ  
Դադար չէ անում, այլ նա անհամբեր  
Թիթեռի նըման թըռչկոտում է միշտ  
Մի առարկայից դէպի ուրիշը:  
Ես անուշադիր էի մանաւանդ  
Ձեր վերջին խօսքին, կարող թագաւոր:

ԱԺԴԱՀԱԿ

Ես ասում էի, որ դու կը փշըես  
Թըշնամու ոյժը: Այնպէս չէ, Հարպագ:

ՀԱՐՊԱԳԵՍ

Մեր աստւածների օգնութեամբ,  
Այն, թագաւոր:

ԱԺԴԱՀԱԿ

Քո մի խոստու մով,  
Սիրելի Հարպագ, սիրուս շահեցիր:  
Այսուհետեւ դու երկրորդ անձըն ես  
Խճանից յետոյ, դու իմ առաջին  
Խորհըրդականը, դու նախամեծար  
Իմ բարձակիցը: Հինա զըզդում եմ,

Որ այն անբանին քեզանից բարձըր  
Եմ գերադասել. այն փառքին, պատուին  
Արժանի չէր նա: Ըստասիր այսոեղ՝—  
Քեզ համար, Հարսկագ, մի ընծայ բերեմ,  
Մի անգին ընծայ: Երկսայրի շըքեղ  
Մի սուր ես ունեմ. քեզ է պատկանում  
Նա այսուհետեւ: Ես շուտով կը գամ (Գնում է)

## ԵՐԵՒՈՅԹ. VIII

ՀԱՐՊԱԳԻՍ (մենակ)

Գալարւիր դու, օձ, ոաներըս լիզիր,  
Նըւպյտ բըռնակալ: Բանըդ պըրծած է:  
Թէ զաւակիս էլ կենդանացընես—  
Ես չեմ փափկանալ, սիրս չի կակզիլ.  
Խմ սիրտըն արդէն բիրդ քար է դառած.  
Նորան ընծաներ և արտասուքներ  
Զեն հալեցընիլ. միթէ անձրեից  
Կամ թէ սառ ձիւնից ժայռը կը հալւի (մտնում է Աժդահակը)

## ԵՐԵՒՈՅԹ. IX

ԱԺԴԱՀԱԿ, ՀԱՐՊԱԳԻՍ

ԱԺԴԱՀԱԿ

Տեսնիւմ ես, Հարսկագ, ինչ հըրաշալի  
Մի սուսեր է սա: Ահա երախը.  
Խնչպէս փայլում է, քո պատկերըն էլ  
Ահա վերան է. հիացիր, Հարսկագ.  
Պատեանին նայիր: Այս բոյորըն էլ  
Անգին քարեր են. տեսնիւմ ես դու այս  
Երախակալը, տես՝ մի բիծ կամ գիծ  
Կարող ես դըսնել փրզոսկրի վերան:  
Ըսքանչելի՛ է... Առ սուրըդ, Հարսկագ,  
Առ և հըրաշքներ դործիր սորանով:

## ՀԱՐՊԱԴԻՍ (առնում է սուրբ)

Ո՞հ, անասելի քաղցըր է ինձ համար  
Ազագիսի անզին Դէր ըստանալ -  
Այն էլ արքայից Հըրաշալի՛ սուր է,  
Ճիշտ որ հըրաշքներ սա պիտի գործէ:

## ԱԺԴԱՀԱԿ

Հընորհակալ եմ,  
Սիրելի Հարպագ: Այժմ ըշտապիր  
Դու պատրաստելու: Իսկ ես... ես այնպէս  
Ցոգնած եմ արդէն և տըկարացած,  
Որ խսկոյն և եթ կ'երթամ պառկելու (գնում է)

## ԵՐԵՒՈՅԹ X

## ՀԱՐՊԱԴԻՍ (մենակ)

Ո՞չ, Աժդահակ, դու ընծաներով  
Ինձ չես կախարդիլ, արդէն վըրէժըն  
Ինձ կախարդել է: Ակեռ Հարպագն  
Քեզանից պատրւի - երբէք յաւիտեան:  
Այսօր սիրում ես, որ էզուց դարձեալ  
Անիծես դու ինձ: Նան բազդըն այստեղ  
Առաւել հաստատ և ապահով է,  
Քան մեր վիճակը: Ճանաչում եմ քեզ.  
Տէրութեան հիմքըն արդէն մաշեցիր.  
Նա պիտի փըլւի, պիտի կործանւի,  
Պիտ աւեր դառնայ և այնուհետեւ  
Փըլատակների վերայ վերստին  
Նոր, թարմ պետութիւն պիտի բարձրանայ:

# ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՐԱՐԻԱԾ

## Տեսարան Ա.

Հալոց զօրքի բանակը. ձիւնախառն հողմ. առաւօտ:

### ԵՐԵՒՈՅԹ 1

ԵՐԿՈՒ ՊԱՀԱԿ ԶԻՒՆՈՐՆԵՐ

2-րդ ՊԱՀԱԿ

Հը՛, այս ցըրտերի հետ բնչպէս ես, տղայ:

1-ին ՊԱՀԱԿ

Էլ մի ասիւ որ բաններս շատ վաս է: Էսպէս էլ բան կը լինի,  
աղբեր, որ մեր գլխին են գալիս, էպան էլ նստել, սպասել  
կը լինի, որ մեզ են սպասել տալիս: Անտէր ձմեռն էլ եկաւ վրայ  
հասաւ, բուք ու բորան էլ վեր կացաւ... զրուաստ մեզ ձիւնաթաղ  
անելու միտք ունեն, աստւած է վկայ: Էլ թուփ ու ցախ չը թո-  
ղինք դաշտերում, անտառում էլ ծառ չը թնաց որ չը կոտորէինք,  
բերէինք կրակ տայնինք, մացաւուտ տեղերը այս ափիս նման դզաց-  
րինք. վերջունն էլի մի բան չընկաւ մեր ձեռքը: Զարդելու ենք,  
աղբեր՝ մի անդամից ջարդւենք, շանսատակ լինենք. ջարդւելու շենք՝  
շուտ թողնենք ու մեր բանին. գործին երթանք. մենք էլ ցաւ ու  
դարդ ունինք, մեր գլխի ճարը տեսնենք: Թէ չէ սա բնչ է, էսօր  
սպասեցէք, էգուց սպասեցէք. էսօր էգուց գցելով հինգ ամիսն էլ  
կերանք, ցրտերն էլ եկան վրայ հասան, մեր ձեռն էլ հէջ մի բան  
չընկաւ:

## 2-րդ ՊԱՀԱԿ

Սրան մտիկ արէք, սրան Սի հարցնող լինի—խելքդ բանի հասնում է, ա մարդ, որ գլխիցդ մեծ մեծ բաներ ես զուրս տալիս։ Մեր թագաւորիցն էլ շատ բան չը հասկանանա։ երեխ հանգամանկները ծուռ են զնում, կամ մի ուրիշ պատճառ կայ, որ բանը գլուխ չի գալիս, չե՞ն Պահ, ի՞նչ փշում է. էս վրանները տակն ու վրայ չ'անի, լաւ է։

## 1-ին ՊԱՀԱԿ

Է՛, դեռ շատ ես ջահէլ։

## 2-րդ ՊԱՀԱԿ

Արզուդ քեզ քաշիր, ասում եմ, թէ չէ կ'ասեմ, որ մեծիդ դէմ հակառակ բաներ ես խօսում։

## 1-ին ՊԱՀԱԿ

Մեծի դէմ նվ է հակառակ բաներ խօսում, որ ասում ես. այ տղայ, երազմամդ ես, ի՞նչ է։ Մեկը ի՞նչ իրաւունք ունինք մեծաւորի դէմ հակառակ բաներ խօսել. փառք Աստուծոյ, խելքն երս դիմներումն է, ես ջանիցս հօ ձեռ չեմ վեր առել։ Իմ թագաւորը սազ կենաց. ես նվ եմ, որ նորա դէմ վատ կամ հակ առակ բաներ խօսեմ. նրա եղնդի կեղտն էլ չեմ դառնալ։ Ես մենակ էն էն ասում, որ մեր նստել սպասելուց օղուտ չը կայ և չի էլ լինելու. էս է իմ ասածս, թէ չէ...»

## 2-րդ ՊԱՀԱԿ

Բաս մեր Տիգրանուհին, էն որ մուժ բանսում ընկած՝ էս հինգ ամիս է տանջւում հալ ու մաշ է լինում, էդ ոչինչ քեզ համար համ ։ Սրան մտիկ արէք։ Անիծւած երկրից բաս նա չը պիտի ազատւին նա, որ մեծ թագաւորական ցեղից է, էն տեսակ զրկանքներ, չարչարանք է քաշում, էլ մեզ եկածն ի՞նչ, քեզ եմ հարցնում։ Ախար էս էլ մի միաք արա է։ Թող առաջ նա մի գայ, թագաւորն էլ միամուի, մենք էլ միամաւենք, որ յետոյ մի ուրախ սրտով մենք էլ զուրս զանք ու ջարդ տանք անիրաւներին է։ Պատերազմը դու հանաք բան ես իմանում, ի՞նչ է. սա քո տեսած

աքլորակոխւը չե, բարեկամն Աչքերդ մի անգամ դեռ բաց ու խուփ չարած, մին էլ տեսնում ես՝ տժժալով նետը սրտումդ ցցւեց, դու էլ գետնին թաւալ-թաւալ ես գալիս նետն էլ հօ մեծի, պատկի մոտիկ չի անում. թագաւորին էլ է վեր գցում, զինորին էլ ։

## 1-ին ՊԱՀԱԿ

Է՛հ, ի՞նչ ասեմ քեզ! Լաւ է կրակ անենք, տաքանանք!

## 2-րդ ՊԱՀԱԿ

Ես էստեղ բան եմ ասում, դու էլի քո էշն ես քշում! Մի հասկացիր էլի, ախար զու էլ մարդ ես, մարդու որդի ես... Երւանդ գօրավարը գալիս է, տեսնում ես!

(Մտնում են Երւանդ և մի քանի զօրավարներ)։

## ԵՐԵՒԱՅՑԹ. II

ԵՐԻԱՆԴ, ԶՈՐԱՎԱՐՆԵՐ, ՊԱՀԱԿՆԵՐ

## ԵՐԻԱՆԴ

Թագաւորը դեռ չէ արթնացել

## 1-ին ՊԱՀԱԿ

Խչափէս չէ: Նորին Մեծութիւնը արևածագին արթնացաւ և մենակ, առանց թիկնապահների, սոսենու կողմը զնաց:

## ԵՐՈՒԱՆԴ

Այս վատ եղանակին... Նորին Մեծութիւնը մոալլ, տխուր Էր:

## 1-ին ՊԱՀԱԿ

Այս, Ար թագաւորը չափաղնց մոալլ էր և անհանգիստ: Նորին Մեծութիւնը մեզ վերայ մարի էլ չ'արաւ, բնչափէս սովորաբար նայում էր և ողջունում, այլ լուռ ու մունջ դլուխը քաշ արած անցաւ մեր մօսով:

## ԵՐԻԱՆԴ

Բայց զու մրտեղից գիտես, որ Նորին Մեծութիւնը սոսենու մօտ գնաց ճեմելու:

## 1-ին ՊԱՀԱԿԱԿ

Թագաւորը երբ շատ ախուր է լինում, միշտ այնոեղ է գնում:  
ԵՐԻԱՆԴ

Այս օրւայ եղանակը բոլորիս էլ խրանեցրել է: Նորին Մեծութեան երեկի նոյն բանն է տանջում, ինչի համար մենք այսոեղ եկանք խորհրդակցելու:

## ՄԻ ԶՈՐԱՎԱՐ

Այսպէս խմբով հէնց երթանք թագաւորի մօտ:  
ԵՐԻԱՆԴ

Ոչ, սպասենք, մինչև նա զայ: Պէտք չէ խանգարել... Ահա նա ինքը. ճիշդ, որ մռայլ է և քայլերը մռլորւած: Երեկի մի որոշ եղբակացութեան դեռ չէ եկած նորին Մեծութիւնը: Խակ և խսկ այնպէս է քայլում, ինչպէս մի շարաթ առաջ, երբ նա նոյնպէս վերադառնում էր սոսենու մօտից, և մենք այնոեղ սպասում էինք նորան: (Մանում է Տիգրանը):

## ԵՐԵՒՈՅԹ. III

ՏԻԳՐԱՆ, ԵՐԻԱՆԴ, ԶՈՐԱՎԱՐՆԵՐ, ՊԱՀԱԿՆԵՐ

## ՏԻԳՐԱՆ

ՈՂՋԱՆ ՃԵՂ:

ԲՈԼՈՐԵՔԵԱՆ

ՈՂՋԱՆ:

ԵՐԻԱՆԴ

ԶԵՐԸԴ ՄԵծութիւն,

Ես զարմանում եմ, որ անտանելի

Այս եղանակին դեռ զբօսնելու

Ախորժակ ունիք:

## ՏԻԳՐԱՆ

Ես բոլորովին

Տարակուսւած եմ, սիրելիները

Զը գիտեմ ինքըս Բնէ անեմ լաւ է.  
Իմ քոյրը չը կայ, տեղեկութիւն էլ  
Զը կայ նորանից, Բանդապետի տեղ  
Կարծես ահռելի վիշապ է հըսկում  
Մեր Տիզրանուհուն, որ ոչ մի ընծայ  
Կարողանում չէ կաշառել նորան...  
Իսկ ձմերային այս հողմերն էլ  
Խնձ ամենևին մոլորեցրին:

## ԵՐԻԱՆԴ

Մտնենք տաղաւար, ողորմած արքայ,  
Եւ այնտեղ խօսենք Դուք շատ դադրած էք:

## ՏԻԳՐԱՆ

Ես կարծում էի, որ Տիզրանուհին  
Կ'ազատւի մի օր և այստեղ կը գայ,  
Եւ այնուհետեւ մենք էլ սիրու առած  
Թշնամիների առաջը կ'ենենք:  
Իսկ այսօր յոյսըս ամպերում ծածկւած  
Արեգակի պէս աղօտացել է...

## ԵՐԻԱՆԴ

Ողորմնած արքայ,  
Նոյն խորհուրդըն է մեզ այստեղ բերել:  
Աղաչում ենք մենք—հըրամայեցէք  
Շուտով ըսկսել ճակատամարտը  
Յետաձբելու էլ հընար չկայ.  
Կատաղի ցըրտերն էլ ահա եկան  
Եւ դաշտերն էլ շուտով կը ծածկւեն  
Զիւնով. այնուհետեւ պատերազմական  
Անյարմարութիւն է առաջ գալիս  
Խնչպէս պատմում են, անտանելի է  
Այստեղ ձմեռը. սառնամանիքը,  
Բուք ու բորաններ անպակաս են միշտ  
Այս միջոցներին: Պաշարեղէնը

Մատակարարում են միշտ անկանոն,  
 Հանդերձեղէնի մեծ քանակութեան  
 Պահանջ կայ նոյնպէս: Ամենայն բանի  
 Կարիք և կարիք եւ այս բոլորի  
 Հետեանքները շատ բնական են:  
 Զօրքի տրտունջը և գանգատները  
 Արդէն բացայացտ արտայալու ուժ են:  
 Բոսկէից բռակէ ասատկանալով:  
 Խակ Կուրուշն էլ վաղուց է արդէն  
 Մեզ մօտիկացել և մեզ է մընում:  
 Շուտով նորանից  
 Պատգամաւորներ պիտի գան այսուեղ  
 Ներկայանալու Զերդ Մեծութեան  
 Մեր առաջիկայ գործերի համար:  
 Երեխ նըման պատճառներն են  
 Ըստիպել նորան ճակատամարտը  
 Փութացնելու. մեր պարսիկները,  
 Խնչպէս յայտնի է, այնքան առկուն չեն,  
 Որ կարողանան խիստ զըրկանքների  
 Երկար դիմանալ: Կարող թագաւոր,  
 Այս բընութիւնը հանգամանքի հետ  
 Համաձայնութեան դաշըն է կապել:  
 Այս մըռընչիւնը կարծես բասրելով  
 Նախատում է մեզ մեր այս քընէած  
 Եւ աններելի զրութեան համար:  
 Բոլորի դէմքին որոշ կարդում եմ  
 Միմիայն մի բան. «ըսկսենք շուտով  
 Ճակատամարտը». ամենայն կողմից  
 «Բականք շուտով ճակատամարտը»:

## ՄԻՒՍ ԶՈՐԱՎԱՐՆԵՐԻ

Ըսկսենք, արքայի, քանի ուշ չէ դեռ:

## ՏԻԳՐԱՆ

Բայց քոյրըս, քոյրըս... Միթէ մենք նորան  
Պիտի մոռանանք և բախտի բերման  
Խըղճուկին յանձնենք: Բայց եթէ յանկարծ  
Այն Աժդահակը ճակատամարտը  
Թողնելով փախչի, Եկրատան գընայ,  
Միթէ կենդանի կը թողնէ նա դեռ  
Մեր Տիգրանուհուն. նա պատառ պատառ  
Կ'անէ իշ՝ քըրոջ, իւր քէն ու մաղձը  
Թըշւառի գըլիսին միայն կը թափէ,  
Խնչպէս կէս եղած ոխակալ մի օձ:  
Ո՞ր մեղքի համար այս անասելի  
Տառապանքները նա պիտի կըրէ...

## ԱՐԻԱՆԴ

Զերդ Մեծութիւն, Զեր մի սըխալը  
Թող չը կաշկանդէ բիւրաւոր մարդկանց  
Կորովի ձեռքերն, ու առաջիկայ  
Մեր անելիքը թող չը տարտամի,  
Միք թողնիլ ացրպէս եռանդուն գործը  
Դանդաղի նորից և հիւանդանայ.  
Խմացի՛ր, արքայ, որ այս փափագը  
Մեր այս քանիսի քըմահաճութիւն,  
Կամքը չէ միայն, այլ իմ բերանով  
Այժմ խօսում է անդիմադրելի  
Անհրաժեշտութիւնը, Միթէ հընդամեայ  
Մեր զըրկանքները մեր մի յանցանքը  
Դեռ չը քաւեցի՛ն: Գովելի է, տէր,  
Երբ յօժարկամ զօհաբերութիւն  
Են անում անթիւ-անհամար մարդիկ  
Մի անձի համար. բայց երբ չափազանց  
Սանըր են դառնում տառապանքները  
Եւ զըրկանքները ըստիսլողական,—  
Այն ժամանակ, տէր,

Անդիմադրելի օրհասի առջև  
Համը է լեզուն և ջանքըն անզօր:

(Հեռուց լսում են աղմուկ և ձախներ—սկեցցէ Տիգրանուհին) Տիգրանը  
և մերձաւորները զարմացած նախում են հեռոււ—Վերջապէս երևում է Տիգ-  
րանուհին՝ ուրախ, բայց նիհար և մաշտած, Տիգրանը և Տիգրանուհին  
գրկախառնուում են.

## ԵՐԵՒՈՅԹ Խ

ՏԻԳՐԱՆ, ՏԻԳՐԱՆՈՒՀԻ, ԵՐԻԱՆԴ, ԶՈՐԱՊԵՏՆԵՐ

ՏԻԳՐԱՆ

Իմ անգի՞ն քոյրի՞կ... այս ի՞նչ ես դառել.  
Ի՞նչ չար թալիսման քեզ կարողացաւ  
Ազգան փոփոխելի Ո՞ւր են քո աչքերն,  
Որ փայլում էին ինչպէս զոյդ աստղեր  
Երկնակամարում— օ այժմ նոքա  
Խոր փոս են ընկել, աղօտացել է  
Եւ նոցա լոյսը: Դու այնքան առողջ  
Ամրակազմ էիր, իսկ այժմը հրքան  
Դու նիհար և թոյլ... Անգի՞ն իմ քոյրի?,  
Քո այդ ժըպիտը թէ իմանացիր  
Ո՛րքան ցընծութեամբ է լրցնում հողիա:  
Օ՛ երանի՞ թէ պատպանձւէր լեզուս,  
Որ ճարտարախօս իմաստակութեամբ  
Քեզ չը յորդորէր գնալ և ընկնել  
Իմ արիւնարբու թըշնամու գիրկը:  
Ասա, սիրելիս, պատմի՞ր, իմ հոգեակս  
Բոլոր տանջանքներըն, որ դու կըրեցիր  
Քո եղբօր մեղքով...

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Թանկադի՞ն եղբայր,  
Խչմւ վրշտացնեմ ես ձեր սըրտերը  
Անցած տանջանքի պատմութիւններով:

## ՏԻԳՐԱՆ

Ո՛չ, ոչ աղաւում եմ ես, սիրելին.  
 Պատմի՞ր և հոգիս վրէժիսընդրութեան  
 կըրակով վառիր, որ, ինչպէս կայծակ,  
 ես Աժդահակի շար գըլսին ճայթեմ.  
 Ասա—այն բանաը, ուր փակւած էիր  
 Խոնաւ էր արդեօք, կամ թէ լոյս-արև.  
 Արդեօք թափանցում էր նորա ներսը.  
 Դէ խօսիր, հոգեակ, ես ըսպասում եմ:

## ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Խոնաւ, բորբոնած ցուրտ էր այն բանաը,  
 Ուր փակւած էի: Հինգ ամբողջ ամիս  
 Կարօտ մընացի արեգակի ջերմ մի ճառագալթի,  
 Եմ կերակուրը—մի կտոր հաց էր,  
 Եւ իմ խըմիչքըն էր մի բաժակ ջուր:

## ՏԻԳՐԱՆ

Անէծք, բիւր անէծք Աժդահակի տան:

## ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Անտանելի էր իմ բանտարկութեան  
 Սռաջին ամիսն: Ես կարծում էի  
 Թէ շուտով մահը վերջապէս կը գայ  
 Խնձ հանգիստ տալու, Բայց հետզհետէ  
 Ես սովորեցի իմ մըթին բանտին:  
 Բայց իմ սև բանաը միայն մի հատ լոյս  
 Էր լուսաւորում—զա իմ յոյսըն էր:  
 Եւ ես կենդանի էի միմիայն  
 Այդ պայծառ յուտով  
 Խնձ թըւում էր թէ պիտի գայ մի օր,  
 Երբ ես բանտից պիտի ազատուեմ.  
 Եւ այն օրըն եկաւ—շընորհակալ եմ—  
 Զեղանից, բարի, կարծղ ասու ածներ:

ՏԻԳՐԱՆ

Եւ մի՞թէ ամբողջ ձեր ասպարանքում  
Մի հաստ սըրտացաւ, մըտերիմ մի անձ  
Զը կար քեզ հայար:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻՆ

Խնչպէս չէ, և զբայլը,  
Թագուհիների նախկին թագուհին,  
Բարի Անոյշը, այնքան սըրտացաւ  
Եւ գըթասիրտ էր, որ ամենայն օր  
Բանողն էր գալիս ինձ այցելելու:  
Սիրելի եղբայր, դու չես հաւատալ  
Թէ մըքան անխիղճ և զազանի սիրտ  
Կարող է լինել կընոջ կըրծքի տակ.  
Երբ արթուն եմ ես, յանկարծ տեսնում եմ—  
Դուռը բաց եղաւ, և նա ներս մըտաւ.  
Նա քըրքջում է, նա ծափ է տալիս  
Եւ չար ծիծաղում վիճակիս վերան:  
«Հը, ասա տեսնեմ,—նա ծաղրում էր ինձ,  
և նախկին գմհըդ էր աւելի փափուկ  
«Թէ այդ գետինը...» Բայց լուռ էի ես.  
Լուռ հըպարտութեամբ կամենում էի  
Ես յաղթել նորան—բայց աւազ—ունայն:  
Հազիւ թէ ինձնից նա հեռանում էր,  
Եւ գըռան փակը ձըգում էր եռից—  
Եմ աւքերիցըս արտասուքները  
Հեղեղի նըհան դուրս էին թափւում:  
Այնժամ յուսահատ կտրատում էի  
Ես իշ ձեռքերը և մանկան նըման  
Հեկեկում, լալիս...

ՏԻԳՐԱՆ

Լըսեցէք սորան,  
Բարի աստւածներ, Ես աղաջում եմ

Զեղնից մի հաս բան—ինձ միջոց տըւէք  
 Աժդահակի չար, անըզգայ սիրուը  
 Արինաթաթաւ ես ցցեմ իմ սուը  
 Նիզակի ծայրից. և թռղ իւր քըրո՞ջ  
 Ամեն մի կաթիլ արցունքի համար  
 Հարիւր Մեղացի լուռ գետին վիրում  
 Միմիայն այդժամ գուցէ հովանայ  
 Իմ այրուած սիրուը:  
 Սիրելիները՝ս, այսօր կը լինի  
 Անվրէպ վախճան և ձեր անախորժ  
 Խըստակեցութեան և իմ չարատանջ  
 Երկար վարանման: Այսօր կը մաքրենք  
 Բանակատեղին մեր վըրաններից.  
 Իմ ժիր զինւորներ, կը ջանաք շուտով  
 Դուք զինավառել հեծելազօրը  
 Եւ հետեւակը գընդերի բաժնել:  
 Եւ կը հըրամայէք պատերազմական  
 Փողերը հընչեն, թըրմբուկները զարնեն:  
 Էշտապիր, գնա մեր դաշնակցի մօտ  
 Եւ յայտնիր նորան իմ այս վըճիուը:

Երւանդը գնում է Լսուում է փողերի հնչիմը Տիգրանը և Տիգրա-  
 նուհին կամաց կամաց հեռանում են:

---

## Տեսարան Բ.

Բլուր. Աժդահակի և մերձաւորների տաղաւարները.  
Հեռակից աղմուկ:

### ԵՐԵՒԱՌԹ Կ

ԱԺԴԱՀԱԿԻ ԹԻԿՆԱՊԱՀՆԵՐԸ

1-ին ԹԻԿՆԱՊԱՀ

Կանչիր Աժդահակին. Էլ քնելու ժամանակ չէ;

2-րդ ԹԻԿՆԱՊԱՀ

Կարճղ թագաւոր...

3-րդ ԹԻԿՆԱՊԱՀ

Գոռած, այ տղայ, պինդ կանչիր, ձայնը փերդ է ընկել, բնչէ:  
Շուտ արա:

2-րդ ԹԻԿՆԱՊԱՀ

Կարճղ թագաւոր, արթնացէք, թըշնամիները յարձակւել են...

1-ին ԹԻԿՆԱՊԱՀ

Այստեղ եկէք, տղերք. տեսէք Հարպազը ի՞նչ է անում. Կու-  
րուշի կողմն անցաւ, մատենիկ գունդը հետևեց նորան...

(2-րդ Թիկնապահ մտնում է տաղաւարը).

ԱԺԴԱՀԱԿԻ ԶԱՅՆԻ (տաղաւարից)

Սաղաւարտս այստեղ տուր... նիզակս... այնտեղ է, շնոր զրահս  
բեր, շուտ արա:

3-րդ ԹԻԿՆԱՊԱՀ

Մեր տունը քանդուեց, տղերք... Այս ի՞նչպէս են կոտորում:  
(Մանում է Աղժահակը).

## ԵՐԵՒՈՅԹ. VI

ԱԺԴԱՀԱԿ, ԹԻԿՆԱՊԱՀՆԵՐ

ԱԺԴԻԱՀԱԿ

Խնչմա շուտ չարթնացրիք:

1-ին ԹԻԿՆԱՊԱՀ

Մենք կանչում էինք, թագաւոր, գուռում էինք, լայց...

ԱԺԴԻԱՀԱԿ

Պատմեցէք, տեսնեմ այս բնչպէս եղաւ, որ այսպէս յանկարծ, այսպահ անսակընկալ...

1-ին ԹԻԿՆԱՊԱՀ

Այսաեղ՝ կրակի մօտ կանգնած տաքանում էինք, յանկարծ լսում ենք մի խուլ աղմուկ բարձրացաւ, յետոյ քանի գնաց նա աւելի և աւելի սաստկացաւ. սկսեցին լսւել լաց, կոծ, լարերի ճայթիւն, վահանների կոփկոփիւն... նայում ենք—կոտորածը սկսւել է, մերոնց ջարդում են: Մերոնք էլ անհող, անգուման իրանց համար ընկած էին վրաններում, դեռ բոլորովին անպատճառասու:

ԱԺԴԻԱՀԱԿ

Զօրքերս կէս եղան... անիծեալ Հարպագ...

Խնչ եկար գըլիսիս, իմ պետութիւնը

Դու կործանեցիր, անօրէն Հարպագ...

Անթիւ գընդերըս ջարդ ու փշուր արիք,

Նըզովմած կուրուշ, ատելի Տիգրան...

Դեռ կենդանին են երազարաններս.

Ցըցերի վերայ նըտեցրէք նոցա,

Եւ իսկոյն և եթ: Իմ Մարաստանը

Նոքա քանդեցին, աւերակ դարձրին...

Կարնդ աստւածներ, Ահուրա-Մազդա,

Օգնութեան հասէք, իմ Մարաստանը

Զեռքից դուրս եկաւ. մըտերիթներըս

Դաւաճանեցին, իմ հարազատըն

Իմ դիմաց ելաւ, ինձ բոլորեքնան

Թողեցին մենակ... Անհամար զոհեր  
Կը մատուցանեմ ես ձեզ. ասուածներ,  
Բարի ասուածներ, օգնութեան հասէք  
Յուսահատ, լրքեալ, անբախտ ծերունուս,  
Աղաչում եմ ես...

## 2-րդ ԹԻՒՆԱՊԱՀ

Մեր ձախ թեհն էլ անձնատուր եղաւ,

## ԱԺԴԱՀԱԿ

Բայց մեր աջ թեհն... տեսնում էք ինչպէս  
Նա ջարդ է տալիս անիրաւներին...  
Այդպէս, իմ քաջեր, օհ հալալ լինի  
Բոլորիդ ծըծած մայրական կաթը:

## 3-րդ ԹԻՒՆԱՊԱՀ

Կարող թագաւոր, այնտեղ նայեցէք... Տիգրանի գունդը...

## ԱԺԴԱՀԱԿ

Իմ վերջին յոյսը, վերջին իմ յոյսը  
Զարդ ու փշուր եղաւ... Տիգրանի գունդը  
Հեղեղի նման ողողեց, տարաւ  
Իմ անմահներին... մօտիկանում են...

Շուտով ձիերը թայբեցէք բերէք.  
Մեր բանը ողբճաւ, մեզ մընաց փախչել  
Գլնալ Եկրատան, այնտեղ ամրանալ:  
Պատնէշն էլ անցան: Զիս այստեղ բերէք,  
Ես ձեզ ասում եմ. դուք մւր էք վազում...  
Դժուք էլ թողեցիք ձեր թաղաւորին,  
Անէ՛ծք բոլորիդ... (Ուզում է փախչել, մտնում է Տիգրանը).

## ԵՐԵՒՈՅԹ. Ա II

ԱԺԴԱՀԱԿ, ՏԻԳՐԱՆ

## ՏԻԳՐԱՆ

Կանգնիր, Աժդահակ.  
Այդ մւր ես ուզում ինձանից փախչել:

Միջէ կարծում ես, որ ազատւելու  
Մի հընար ունիս. այլ ես երբէք  
Քեզ փըրկանք չը կաց, Զարնըւթիր տեսնենք,  
Թէ արքունական խիզախութիւնըդ  
Քեզ դեռ չէ թողել Հարպագի նըման: (Զարնում են).  
Ել մի' հեռանալ, կամենում էիր  
Արիւնըս թափել, արի ու թափիր —  
Ահա այսուղ եմ: Ազւէսի նըման  
Խնչ ես կըծկել. զարնւիր... այդպէս...  
(Տիզըանի հարածից Աժդահակը գետին է ընկնում).  
Թաւալւիր այդպէս, սոզն, ուխտաղբուժ...  
(Հեռվից լսում են լաղթանակի ձաշներ).  
Այսուղ բարձրացրէք, մեր Աժդահակը  
Վեր վեր է թըռչում և պար է գալիս  
Ուրախութիւնից:  
Կեցցէ Հարպագ, կեցցէ Կուրուշ, կեցցէ  
Մեզ զօրք... (Գալիս են Հարպագը, Կուրուշը և զօրքերը)

## ԲՈԼՈՐԵՔԵԱՆ

Կեցցէ Տիզըանուհի:

## ԵՐԵՒՈՅԹ. VIII

ՏԻԳՐԱՆ. ՀԱՐՊԱԳ. ԿՈՒՐՈՒՇ, ԶՈՐՔԵՐ:

## ԿՈՒՐՈՒՇ

Միջէ խեղճի մօտ մի հաւասարին  
Թիկնապահ անզամ չը մընաց այսուղ,  
Որ պաշտպանէր հէզ իւր թագաւորին...  
Թըշւառ ծերունի:

## ՏԻԳՐԱՆ

Խսկ դու, իմ Հարպագ.

Դու ինչու այդպէս ալիսրեցիր յանկարծ,  
Կուրուշն ասենք մեղքանում է դեռ:

Այեւոր պապին, որ անօղնական  
Նւ լըքեալ մեռաւս Դու ևս խըզճում:

### ՀԱՐՊԱԳԻՍ

Ինձ եմ ես խըզճում, որ պիտի մեռնեմ՝  
Վրէժը սըրտումըս. նա այսուհետեւ  
Լեզի կը դառնայ, ինձ ներքուստ կ'ուտէ,  
Ես տաաը տարի սորան իմ որսըն  
Եկ համարումն

### ՏԻԳՐԱՆ

#### ՍԻՐԵԼԻՆԵՐԸ

Ես ըշտապում եմ դառնալ Արմաւիր.  
Մեղացիներից տասը հազարը  
Պայմանաւորւած աւարս կառնեմ՝  
Արաքսի ափում, Գողթան սահմանում  
Բընակեցընելու Դուք մընաք բարովի  
Ցանկանում եմ ես, որ Մարաստանի  
Փըլատակներից բարձրանայ մի ճոխ  
Կարող պետութիւն,  
Այսուհետեւ ծաղկի և հարըստանայ  
Գալիք բարգաւաճ օրերի համար:  
Այս զոյտ մատանիս ձեզ ընծայ լինի,  
Իբրև լիշտոտակ այս յաղթանակին  
Եւ իբրև նըշան իմ խորին, անկեղծ  
Շնորհակարութեան:  
Զեռըդ տաւր այստեղ, իմ Տիգրանուհի:  
Սիրելի Երւանդ, մեզ առաջնորդի՛ր  
Դէպի Արմաւիր:  
(Տիգրանը զօրքի հետ գնում է, նւագածութիւն.)

(Վ.ԱՐԱԳՈՅՔԸ ԻՉՆՈՒՄ է)